

«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՂԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

04.10.2013թ.

գ. Վարդաքար

Համաձայն «Վիոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանի և ի կատարումն «Շիրակի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վարդաքարի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 111 կարգադրության, աշխատանքային խումբը, մասնակցությամբ՝ «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյանի, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետի տեղակալ՝ Գագիկ Եղիազարյանի, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Արտյոմ Սարգսյանի, «Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Արմեն Հարությունյանի, ինչպես նաև «Շիրակի մարզի Վարդաքարի գյուղական համայնքի ղեկավար Գալուստ Ավետիսյանի Վարդաքարի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի հուլիսի 1- ից մինչև 2013 թվականի սեպտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի սեպտեմբերի 13-ին և ավարտվել՝ 2013 թվականի սեպտեմբերի 27-ին:

**ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

Համայնքի ղեկավարը համայնքում կատարված նախորդ վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2010 թվականի սեպտեմբերի 24-ի տեղեկանքը ներկայացրել է համայնքի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 13 արտահերթ նիստի քննարկմանը, մշակվել և գործողության մեջ է դրվել միջոցառումների ժամանակացույց և անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել տեղեկանքում արձանագրված համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների իրականացման գործում տեղ գտած թերություններն ու բացթողումները վերացնելու ուղղությամբ:

1) Համայնքի նորընտիր ավագանին իր լիազորությունները ստանձնել է 2012 թվականի նոյեմբեր ամսին և օրենսդրությամբ սահմանված ժամկետում ընդունել է իր կանոնակարգը և ուժը կորցրած է ճանաչել ավագանու կանոնակարգը ընդունելու վերաբերյալ ավագանու

նախորդ որոշումը /«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք 16-րդ հոդված 1-ին մաս/.

2) համայնքի զարգացման 2013-2016 թթ. քառամյա ծրագրում անհրաժեշտ տեղեկություններ են ներկայացվել համայնքի սոցիալական և տնտեսական իրավիճակի մասին: Կատարվել են համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում, քառամյա ժամկետում բյուջեի կատարման կանխատեսումներ և ծրագրում ներառված աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեով նախատեսվող ներդրումների ապահովման հիմնավորումներ: Փաստաթղթում ներառված ծրագրային աշխատանքներում նշվել են առաջադրված հիմնախնդիրների նկարագրությունները, ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, աշխատանքների ծավալները, անհրաժեշտ ֆինանսական միջոցներն ու դրանց աղբյուրները, իրականացման ժամկետները, ծրագրերի կենսունակության ապահովման հիմնավորումներն ու կատարման պատասխանատուները:

Զարգացման ծրագրում նախատեսված աշխատանքների շրջանակներում շահագործվել է ոռոգման ջրի պլանպակայանը, վերանորոգվել է 1 կմ երկարությամբ ոռոգման ջրագիծը, 1,1 կմ երկարությամբ խմելու ծրագծի ներքին ցանցը, վերանորոգվել են ներհամայնքային ճանապարհները, 2012թվականին անցկացվել է 15 գիշերային լուսավորության կետ:

2013 թվականին երկարացվել է ոռոգման ջրագիծը, որով 20 հեկտար վարելահողը դարձել է ջրովի: Մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի վերջ կտեղադրվեն ավտոբուսային 3 կանգառների սպասարահներ և ևս 15 կետով կավելանա գիշերային լուսավորությունը:

Միաժամանակ նշում ենք, որ համայնքի բյուջեի սեփական եկամուտների ոչ լիարժեք հավաքագրման և այլ միջոցներ ներգրավելու հնարավորությունների բացակայությամբ պայմանավորված զարգացման ծրագրում ներառված 4 ծրագրային աշխատանքներ նախատեսված ժամկետներում դեռևս չեն կատարվել: Ծրագրում ներառված չէ սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները /հիմք ՀՀ կառավարության 2012 թ-ի 25.10 թիվ 1351-Ն որոշում/:

Ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքի ավագանին չի անդրադարձել համայնքի զարգացման ծրագրում ներառված աշխատանքների կատարման ընթացքին:

3) համայնքի բյուջեի, բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունների եւ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունները հաստատվել են /տես <<Ֆինանսական բնագավառ>> կետ 1/.

4) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 69-րդ հոդվածի 1-ին մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների պահանջները հիմք ընդունելով համայնքի ավագանին նիստերում քննարկել է բյուջեի կատարման ընթացքը:

Համայնքի ղեկավարի կողմից եռամսյա հաղորդումներ տրվել են /տես <<Ֆինանսական բնագավառ>> կետ 2/:

Համայնքի բյուջեում կատարված փոփոխություններին վերաբերվող համայնքի ավագանու 2010-2012 թվականների որոշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ իրավական ակտում փոփոխությունները կատարվում են՝ բառեր կամ թվեր այլ բառերով կամ թվերով փոփոխարինելու միջոցով, բառեր, թվեր կամ նախադասություններ հանելու միջոցով, բաժիններ, գլուխներ, հոդվածներ, մասեր, կետեր, պարբերություններ կամ նախադասություններ նոր խմբագրությամբ շարադրելու միջոցով, բաժինների, գլուխների,

հողվածների, մասերի, կետերի կամ պարբերությունների գործողությունը դադարեցնելու միջոցով:

Համայնքը վարկեր չի ստացել և այլ ֆինանսական միջոցներ չի ներգրավել.

- 5) համայնքի ղեկավարի ներկայացմամբ ավագանին որոշել և անհրաժեշտ ֆինանսական միջոցներ է հատկացրել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման համար. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում, ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի ներկայացմամբ, համայնքի ավագանին թվով 12 որոշումներ է կայացրել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգի և անհրաժեշտ ֆինանսական միջոցների որոշման վերաբերյալ: Ընդունված որոշումներով համայնքի թվով 11 կարիքավոր ընտանիքների հատկացվել են միանվագ դրամական օգնություններ (ավագանու որոշումներ՝ 25.02.2013թ. թիվ 3-Ա, 15.03.2013թ. թիվ 8-Ա, 29.05.2013թ. թիվ 12-Ա, և 03.07.2013թ. թիվ 16-Ա): Ընդունված որոշումներում ոչ ճիշտ հղումներ են կատարվել աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառում համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունները սահմանելու վերաբերյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի դրույթին: Բացի այդ, որոշումներում համապատասխան գրառումներ չեն կատարվել դրամական օգնության տրամադրման անհրաժեշտության, պատճառի կամ շահառուի կարիքավորության մասին.
  - 6) համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած կարգով համայնքի սեփականություն համարվող մանկապարտեզի և մշակույթի տան շենքերը անհատույց և անժամկետ օգտագործման է տրամադրվել «Վարդաքարի միջնակարգ դպրոց», պետական ոչ առևտրային կազմակերպությանը /15.03.2013թ. թիվ 7-Ա որոշում/.
  - 7) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով սահմանված իրավասությունների շրջանակներում համայնքի ավագանու կողմից համայնքի ղեկավարի լիազորությունների իրականացման նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել և այդ հարցի վերաբերյալ որոշումներ չեն կայացվել.
  - 8) համայնքի ղեկավարի՝ օրենքին և իրավական այլ ակտերին հակասող որոշումների դատական կարգով վիճարկում տեղի չի ունեցել.
  - 9) համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանվել է ավագանու որոշմամբ /25.12.2012թ. թիվ 47-Ա որոշում/.
- ավագանու համապատասխան որոշումներով 2011, 2012 և 2013 թվականների համար սահմանված համայնքի ղեկավարի աշխատավարձի չափերը համապատասխանում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի նկատմամբ սահմանված տոկոսաչափին: Իսկ 2011 և 2012 թվականների համար սահմանված համայնքի ղեկավարի աշխատավարձի չափերը որոշելու մասին իրական ակտերում ուժը կորցրած չեն ճանաչվել հարցի վերաբերյալ ավագանու նախորդ որոշումները (<հմք՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետ).
- 10) համայնքում բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, ինչպես նաև դրանց ստեղծման համար համապատասխան միջոցներ և պայմաններ չունենալու պատճառով, ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային

կազմակերպությունների ստեղծման, դրանց վերակազմակերպման կամ լուծարման մասին համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել.

11) համայնքում բյուջետային հիմնարկների, համայնքի մասնակցությամբ առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների բացակայությամբ պայմանավորված, ստուգված ժամանակաշրջանում բյուջետային հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ղեկավարների թեկնածուներին համաձայնություն տալու վերաբերյալ համայնքի ավագանին որոշումներ չի կայացրել.

13) տեղական հարկերը, տուրքերը և վճարների տեսակներն ու դրույքաչափերը օրենքով սահմանված կարգով ավագանին սահմանել է /տես ֆինանսական մաս/,

14) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը ավագանու որոշմամբ սահմանված չեն.

15) համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի սեփականություն համարվող մանկապարտեզի և մշակույթի տան շենքերը անհատույց և անժամկետ օգտագործման է տրամադրվել „Վարդաքարի միջնակարգ դպրոց,, պետական ոչ առևտրային կազմակերպությանը /ավագնու 15.03.2013թ. թիվ 7-Ա որոշում/.

16) ուսումնասիրված ժամանակաշրջանում համայնքային նշանակության փողոցների անվանման վերաբերյալ համայնքի ավագանին ընդունել է որոշում /22.04.2006 թ. /.

17) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի դրույթների համաձայն, համայնքի ավագանին համապատասխան որոշումներ է կայացրել 2011, 2012, 2013 թվականների համար աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերն հաստատելու վերաբերյալ (20.12.2010թ. 36-Ն որոշում, 12.12.2011թ. 18-Ն որոշում, 25.12.2012թ. 46-Ն որոշում): Հաստիքացուցակում կատարվել են հետևյալ փոփոխությունները՝ կրճատվել են համայնքի ղեկավարի տեղակալի, մշակույթի տան աշխատակցի, ջրագծի բանվորի, գրադարանավարի և հավաքարարի հաստիքները /ավագանու 25.12.2012թ. 46-Ն որոշում/.

18) բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը չի հաստատվել.

19) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթի համաձայն, համայնքի ավագանին հաստատել է համայնքի սեփականության 2011, 2012 թվականների գույքագրման փաստաթղթերը (20.12.2010թ. թիվ 37 որոշում, 12.12.2011թ. թիվ 20 որոշում, 11.01.2013թ. թիվ 1 որոշում):

2011 թվականին համայնքը ձեռք է բերել պոմպակայնի համար տրանսֆորմատոր , սակայն համայնքի ղեկավարը մեկշաբաթյա ժամկետում այն չի ներկայացրել ավագանու նիստին /«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք 46-րդ հոդված/:

### **1.Ֆինանսների բնագավառ**

1) Վարդաքարի համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն կազմել և սահմանված ժամկետներում համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացրել համայնքի 2011-2013 թվականների բյուջեների նախագծերը՝ (համայնքի ավագանու որոշումներ 20.12.2010թ. թիվ 38-Ն, 12.12.2011թ. թիվ 23-Ն և 25.12.2012թ. թիվ 45-Ն), դրանցում առաջարկվող փոփոխությունները (համայնքի ավագանու որոշումներ՝ 28.08.2010թ. թիվ 23-Ն, 20.12.2010թ. թիվ 34-Ն, 04.04.2011թ. թիվ 4-Ն, 12.12.2011թ. թիվ 19-Ն, 10.10.2012թ. թիվ 40-Ն, 03.12.2012թ. թիվ 42-Ն, 15.03.2013թ. թիվ 8-Ն, 03.06.2013թ.

թիվ 14-Ն, 03.07.2013թ. թիվ 16-Ն), եռամսյա հաղորդումները՝ (ավագանու որոշումներ՝ 06.10.2010թ. թիվ 27, 04.04.2011թ. թիվ 5, 14.07.2011թ. թիվ 8-Ա, 05.10.2011թ. թիվ 11-Ա, 10.10.2012թ. թիվ 38, 15.04.2013թ. թիվ 10, 03.07.2013թ. թիվ 18), տարեկան հաշվետվությունները՝ (ավագանու որոշումներ 21.01.2011թ. թիվ 2-Ն, 16.01.2012թ. թիվ 2-Ն և 11.01.2013թ. թիվ 2-Ն):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 68-րդ և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածների՝ համայնքի 2010-2012թթ. բյուջեների կատարողականի տարեկան հաշվետվություններն ավագանին քննարկել և հաստատել է առանց աուդիտորական եզրակացության.

- 2) համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն տեղական հարկերի, տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծերը ներկայացրել է ավագանու հաստատմանը (ավագանու որոշումներ՝ 20.12.2010թ. թիվ 33-Ն, 12.12.2011թ. թիվ 18-Ն և 25.12.2012թ. թիվ 48-Ն.
- 3) համայնքի ղեկավարը ոչ լրիվությամբ է իրականացրել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.1 կետի դրույթով սահմանված՝ տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքային սեփականություն համարվող գույքի վարձավճարների գանձման և վերահսկման վերաբերյալ պարտադիր լիազորությունները:  
Ստուգված ժամանակաշրջանում 2010թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 12,137.8 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 12,067.5 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 99.4 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 70.3 հազար դրամ:  
2011թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 12,110.0 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 11,922.0 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 98.4 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 188.0 հազար դրամ:  
2012թ. համայնքի ճշտված բյուջեով նախատեսված 12,410.7 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 11,989.5 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 96.6 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 421.2 հազար դրամ:  
2013 թվականի 8 ամիսներին համայնքի բյուջեով նախատեսված 8,360.0 հազար դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքը կազմել է 7,527.4 հազար դրամ: Եկամուտների պլանը կատարվել է 90.0 %-ով, կամ պակաս է հավաքագրվել 832.6 հազար դրամ.
- 4) համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2.2 մասի պահանջի, համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկեր, տուրքեր և վճարներ չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցներ չեն կիրառվել.
- 5) համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ որոշման նախագծեր համայնքի ղեկավարը չի ներկայացրել ավագանու հաստատմանը.
- 6) համայնքի ղեկավարը ստուգված ժամանակաշրջանում լրիվությամբ չի ապահովել համայնքի բյուջեի եկամուտների ամբողջական կատարումը: Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջի համաձայն տնօրինել է համայնքի բյուջեի միջոցները:

Համայնքի վարչական բյուջե հավաքագրված գումարները հիմնականում ծախսվել են աշխատավարձերի, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումների, էլեկտրաէներգիայի, կոմունալ վճարումների, շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման, համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն տրամադրելուն և այլ ծախսերի համար:

Ստուգված ժամանակահատվածում համայնքի ֆոնդային բյուջեներից կատարված ծախսերը հետևյալն են.

2010թ.-747.0 հազար դրամ և 2011թ.-150.5 հազար դրամ:  
2012 թվականի և 2013 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ համայնքի ֆոնդային բյուջեից ծախսեր չեն կատարվել:

2011-2012թթ. ընթացքում ընթացիկ տարվա համար գնումների պլան չի կազմվել և չի հրապարակվել: Գնումները կատարվել են առանց հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջները:

2013 թվականի համար կազմվել է գնումների պլանը պատվիրատու ղեկավարի կողմից և հրապարակվել է Gnumner.am կայքում, սակայն ըստ օրենսդրության պատվիրատու ղեկավարի կողմից չի սահմանվել գնումների համակարգող, պատասխանատու ստորաբաժանում և գնահատող հանձնաժողով:

## **2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ**

1. Վարդաքարի համայնքի ղեկավարի կողմից համայնքի գլխավոր հատակագծի ու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, գոտիավորման այլ փաստաթղթերի կազմման գործառույթներ չեն իրականացվել:

2. համայնքի քաղաքաշինական կադաստրի սահմանված կարգով վարման, համայնքի քաղաքաշինական կանոնադրության կազմման և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելու գործընթաց չի իրականացվել:

3. համայնքի ղեկավարի կողմից իրականացվել է համայնքի բնակչությանը միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին իրազեկման 1 գործառույթ, իրականացվել են կառուցապատողներին 1 ճարտարապետահատակագծային առաջադրանքի (ՃՀԱ՝ 07.03.2013թ. N01) տրամադրման և 1 ճարտարապետաշինարարական նախագծի համաձայնեցման գործընթացներ:

Գործընթացներն իրականացվել են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան,

4. համայնքի ղեկավարի կողմից տրվել է 1 շինարարության թույլտվություն՝ (06.05.2013թ. N01) պետական միջոցների հաշվին Վարդաքարի համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման համար:

Նշված գործընթացն իրականացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան.

5. ավարտված շինարարության շահագործման փաստագրման ակտ չի ձևակերպվել:

6. չեն հայտնաբերվել ինքնակամ շինարարության կանխման ու կասեցման դեպքեր հետևաբար, օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

7. համայնքի ղեկավարի կողմից շենքերի և շինությունների նպատակային օգտագործման և պահպանման կառուցապատողներին տրված

ճարտարապետահաստակագծային առաջադրանքի պահանջների կատարման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8. համայնքի ղեկավարի կողմից կատարվել է համայնքային սեփականություն համարվող շենքերի ու շինությունների հաշվառման, սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերի կազմման աշխատանքներ և ներկայացվել համայնքի ավագանու հաստատմանը:

9. համայնքի քաղաքաշինական կանոնադրությանը համապատասխան արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն չի տրամադրվել:

10. համայնքային սեփականություն համարվող ներհամայնքային հաղորդակցության ուղիների, ջրնուղի կոյուղու, ոռոգման ու ջեռուցման ցանցերի և այլ կառուցվածքների շահագործման կազմակերպման և կառավարման վերաբերյալ իրականացվել է 1 գործառույթ՝ համայնքի ղեկավարի կողմից տրվել է 1 շինարարության թույլտվություն՝ (06.05.2013թ. N01) պետական միջոցների հաշվին Վարդաքարի համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման համար:

11. համայնքը չունի բազմաբնակարան բնակելի շենքեր: Ուստի, համապատասխան գործառույթներ չեն իրականացվել:

### **3. Հողօգտագործման բնագավառ**

1. Վարդաքար գյուղական համայնքը կառավարության սահմանված կարգով կազմված հողերի գոտիավորման և օգտագործման սխեմա չունի ֆինանսական միջոցների բացակայության պատճառով:

2. Վարդաքարի համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են ընդամենը 259.63հա, այդ թվում՝ վարելահող-143.91հա, արոտ-102.78հա և այլ հողեր-12.94հա:

Գյուղապետարանում առկա էր համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար կնքված և պետական գրանցման ենթարկված 66 վարձակալության պայմանագրեր, 141.6 հա վարելահողերի համար՝ 1.319 հազ.դրամ վարձավճարով:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2.31հա վարելահողերը և 102.78հա արոտները օրենքով սահմանված կարգով օգտագործման տրամադրված չեն:

Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

01.07.2010-31.12.2010թ. ժամանակահատվածում բյուջեով նախատեսված 748.95հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 823.6հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

2011թ. բյուջեով նախատեսված 1500.0հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 1502.0հազ դրամ և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

2012թ. բյուջեով նախատեսված 1801.8հազ. դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 1543.9հազ դրամ գումար և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

01.01.2013-01.09.2013թ. դրությամբ բյուջեով նախատեսված 933.3հազ.դրամ վարձավճարի դիմաց անհատական անդորրագրերով գանձվել է 635.0հազ դրամ գումար և նույն գումարը մուտքագրվել է համայնքի հաշվարկային հաշվին:

01.07.2010թ.-01.09.2013թ. ժամանակահատվածում համայնքային և պետական սեփականություն համարվող հողամասերի օտարում չի իրականացվել:

3. Վարդաքարի համայնքի գյուղացիական տնտեսություններում հաշվառված 756 գլուխ խոշոր եղջերավոր անասունների առկայության պայմաններում 102.78հա արոտները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտագործման տրամադրված չէ: Համայնքի ղեկավարի կողմից անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկվել ապօրինի հողօգտագործումը կանխելու և արոտի օգտագործումը օրենքով սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:

4. 01.07.2010թ.-01.09.2013թ. ժամանակահատվածում Վարդաքար համայնքի ղեկավարի կողմից ապօրինի հողօգտագործման դեպքեր չեն արձանագրվել:

5. օրենքով սահմանված կարգով իրականացվել է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռի կազմման գործընթացը:

6.պատշաճ վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական տարածքում գտնվող թվով 3 գեոդեզիական կետերի և սահմանանիշերի պահպանության նկատմամբ:

#### **4. Տրանսպորտի բնագավառ**

- 1) Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման գործառույթներ չեն իրականացվել:
- 2) համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի ու համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկների և կազմակերպությունների գործունեության կազմակերպման և կառավարման գործառույթներ չեն իրականացվել:
- 3) իրավասու մարմինների ներկայացմամբ համայնքի տարածքում ճանապարհային երթևեկության նշանների տեղակայման ու հանման, հաստատման և թույլատրման գործառույթներ չեն իրականացվել:
- 4) համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի կազմման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

#### **5. Առևտրի և ծառայությունների բնագավառ**

- 1) Համայնքը առևտրի, հանրային սննդի 2 կրպակ ունի: Կենցաղային ծառայություններ չունի:
- 2) ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվություն չի տրամադրվել:
- 3) համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություն չի տրամադրվել:



- 4) համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին), խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով թույլտվություն չի տրամադրվել:
- 5) համայնքի տարածքում «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառքի թույլտվություն չի տրամադրվել:
- 6) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն չի տրամադրվել:

## 6. Այլ բնագավառներ

1. 2010-2013 թվականների ընթացքում հրավիրվել են ավագանու 18 նիստեր, ընդունվել 60 որոշումներ:

Համայնքի ղեկավարը չի ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ ոչ պակաս քան երկու ամիսը մեկ անգամ ավագանու նիստ անցկացնելու մասին՝ 2011 թվականի ապրիլ ամսից մինչև 2011 թվականի հոկտեմբեր ամիսը, 2012 թվականի հուլիս ամսից մինչև դեկտեմբեր ամիսը նիստեր չեն հրավիրվել:

Արձանագրությունները և որոշումները մինչև 2013 թվականը համարակալված էին սխալ: Համարների հերթականությունը չէր վերսկսվում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից /<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենք 38-րդ հոդված, 2-րդ մաս:

Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի պահանջը և համայնքի ավագանու կողմից 2011 և 2012 թվականներին ընդունված առանձին որոշումներ ՀՀ Շիրակի մարզպետարան չի ներկայացրել կամ ներկայացրել է սահմանված 7-օրյա ժամկետից ուշացումով /ավագանու արձանագրություն թիվ 1՝ 11.01.2013, ավագանու արձանագրություն թիվ 2՝ 25.02.2013/ : Համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել նաև <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված նորմատիվ բնույթի իրավական ակտերը /համայնքի բյուջեի և նրանում կատարված փոփոխությունների հաստատում, բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատում, օրենքով սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանում և այլն/ չի ուղարկել ՀՀ արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննության համար:

Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվել են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունների 2 գրանցամատյաններ, որոնք սահմանված կարգով համարակալված, թելակարված և կնքված են համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ղեկավարի կողմից համայնքի ավագանու նիստերի ոչ բոլոր օրակարգերի նախագծերն են ձևավորվել նիստից առնվազն տասը օր առաջ: Նիստերի

օրակարգերի նախագծերը, դրանցում ընդգրկված հարցերի որոշումների նախագծերը և համապատասխան փաստաթղթերը ոչ միշտ են տրամադրվել համայնքի ավագանու անդամներին նիստն սկսվելուց առնվազն յոթ օր առաջ («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդված):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով սահմանված կարգով ավագանու նիստերի օրակարգերը հաստատվել են ավագանու համապատասխան որոշումներով:

Ավագանու նիստերի արձանագրություններում համապատասխան նշումներ են կատարվել ավագանու հերթական կամ արտահերթ նիստ գումարելու մասին:

Աշխատակազմում սահմանված կարգով հաշվառում տարվել է ավագանու նիստերին ավագանու անդամների մասնակցության վերաբերյալ:

Համայնքի ավագանու որոշումները ստորագրված են ավագանու անդամների կողմից, բայց հաստատված և կնքված չեն համայնքի ղեկավարի կողմից:

Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի մի շարք որոշումների բնութագրական են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրառման տարբեր խախտումներ: Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի առանձին որոշումներ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի համաձայն չեն պարունակում հղումներ, թե դրանք ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի մասի համաձայն կամ ի կատարումն են ընդունվել, իսկ առանձին որոշումներում կատարված հղումները սխալ են, թերի կամ ոչ հստակ: Առանձին դեպքերում ընդունված իրավական ակտերի բնույթի մասին՝ «Ն» (նորմատիվ), «Ա» (անհատական) տառերի նշումները չեն համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթներին (ավագանու որոշումներ՝ 20.12.2010թ. արձ. թիվ 12, 12.12.2011թ. արձ. թիվ 6, 25.12.2012թ. արձ. թիվ 13):

Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77<sup>5</sup>-րդ հոդվածի պահանջի համաձայն ավագանու քննարկմանն է ներկայացրել ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից ավագանու որոշումների ՀՀ օրենսդրության անհամապատասխանության վերաբերյալ ներկայացված առարկությունները և իրավական ակտերում կատարվել են համապատասխան փոփոխություններ, որոշումները համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրության պահանջներին:

2) համայնքի ղեկավարը ոչ միշտ է ապահովել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1' կետի պահանջը և իր կողմից ընդունված ոչ բոլոր անհատական ակտերն է սահմանված ժամկետում ուղարկել համայնքի ավագանու անդամներին և փակցրել համայնքի ավագանու նստավայրում:

3) համայնքի զարգացման 2013-2016 թվականների քառամյա ծրագիրը ավագանին հաստատել է 25.02.2013թ.

4) աշխատակազմի կանոնադրությունը հաստատվել է /համայնքի ավագանու 25.02.2013թ./.

5) աշխատակազմը կառուցվածք չունի:

6) աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակը եւ պաշտոնային դրույթաչափերը ավագանին հավատարմել է 20.12.2010թ. 36-Ն որոշում, 12.12.2011թ. 18-Ն որոշում, 25.12.2012թ. 46-Ն որոշում)։

7) համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկներ չունի:

8) համայնքային ենթակայության առևտրային կազմակերպություններ չունի:

- 9) գյուղապետարանի աշխատակազմում համայնքի ղեկավարի տեղակալի հաստիքը կրճատված է: Աշխատակազմի քարտուղարի պաշտոնը թափուր չէ:
- 10) համայնքը բյուջետային հիմնարկներ չունի:
- 11) համայնքում տեղական հանրաքվե չի նշանակվել:
- 12) Հայաստանի Հանրապետության կամ այլ պետությունների համայնքների հետ համագործակցության մասին պայմանագրեր չեն կնքվել:
- 13) համայնքի սեփականություն համարվող գույք չի օտարվել:
- 14) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին համայնքի պատվավոր քաղաքացու կոչում չի շնորհվել:
- 15) համայնքի ենթակա փողոցները համարակալվել են 2006 թ-ին:
16. շենքերը և շինությունները համարակալվել են 2006 թ-ին:
- 17) համայնքի ղեկավարը իր իրավասության շրջանակում որոշումները ընդունել, և կարգադրությունները արձակել է օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 18) ինքնուրույն և սեփական պատասխանատվությամբ պետության կողմից պատվիրակած լիազորությունների իրականացումը, կազմակերպումը և ղեկավարումը կատարվել է օրենքով կամ կառավարության սահմանած կարգով:
- 20) համայնքի քաղաքաշինական, բնապահպանական, գյուղատնտեսական և այլ կադաստրներ չեն վարվել:
- 21) օրենքով կամ կառավարության սահմանած կարգով քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային միջոցառումների, ինչպես նաև տեխնոլոգիական և տարերային աղետների վտանգների նվազեցման ու հետեանքների վերացման հետ կապված աշխատանքների կազմակերպման համար միջոցներ ձեռնարկելու նպատակով համայնքի ղեկավարի որոշմամբ ստեղծվել է հանձնաժողով 9 անդամով /համայնքի ղեկավարի որոշում՝ 16.05.2011թ./:
- 22) համայնքի բնակիչների հաշվառումը կազմակերպվել է 2013թ. հունվար ամսին:
- 23) համայնքի շահերին վերաբերող գործեր դատարան չեն ներկայացվել:
- 24) համայնքի բնակչության թիվը կազմում է 797 մարդ:
- 25) սահմանվել է խնամակալության, հոգաբարձության հանձնաժողով / համայնքի ավագանու 05.02.2013թ. թիվ 3 որոշում/: Ստուգված ժամանակաշրջանում համայնքի ղեկավարի կողմից խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանելու վերաբերյալ իրավական ակտեր չեն ընդունվել:
- 26) համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքեր չեն բացահայտվել: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով տրվում է երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն:
- 27) համայնքում օրենքով սահմանված կարգով վարվում է զինապարտների գրանցամատյան: Զինապարտների վերաբերյալ ցուցակների, ինչպես նաև համայնքի բնակչության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները սահմանված ժամկետներում ներկայացվում են տարածքային զինվորական կոմիսարիատ:

## ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

- 1) Գյուղապետարանի աշխատակազմի կանոնադրությունը օրենքով սահմանված կարգով հաստատվել է /համայնքի ավագանու 25.02.2013թ./.
- 2) համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյաններ չեն վարվում: Արդյունքում չեն կատարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1146-Ն որոշման պահանջները.
- 3) կադրային գործի վարման նկատմամբ վերահսկման շրջանակներում ուսումնասիրության ենթարկված իրավական ակտերը՝ իրավական ակտերի հաշվառման մատյաններ չվարելու պատճառով չի համադրվել.
- 4) համայնքի աշխատակազմը կառուցվածք չունի.
- 5) համայնքային ծառայության պաշտոնների հաստիքացուցակը համապատասխանում է համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին, պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին.
- 6) համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերի հաստատման (փոփոխման) ընթացքը, այդ թվում՝ անվանացանկից հանված պաշտոնների անձնագրերը ուժը կորցրած ճանաչելն, ինչպես նաև վերջնական պաշտոնների անձնագրերի բովանդակությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության պահանջներին: Ասկայն պետք է նշել, որ մինչև 2013 թվականի մարտ ամիսը գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-1) պաշտոնի անձնագրի համաձայն նշված պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվել էր «առնվազն միջնակարգ-մասնագիտական» կրթություն, ինչը հակասում էր «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի պահանջներին, համաձայն որի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է միջնակարգ կրթություն՝ առանց աշխատանքային ստաժի և փորձի: Այս առումով նշում ենք, որ համայնքի ղեկավարի 2013 թվականի մարտի 4-ի թիվ 7 որոշմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան փոփոխություն է կատարվել վերը նշված պաշտոնի անձնագրում՝ նշելով կրթության՝ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջը.
- 7) համայնքային ծառայողների անձնական գործերը վարվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգով: Սակայն անձնական գործերում առկա են մի շարք թերություններ՝ բացակայում են լուսանկարները, սոցիալական քարտի պատճենները, համայնքային ծառայողների աշխատանքային գրքույկները լրացված են թերի, վերադրված փակցված են սահմանված տեղում, սակայն ամբողջովին լրացված չեն, անձնական թերթիկները լրացված են թերի, կիսամյակային հաշվետվություններում չի արտացոլված կատարած ողջ աշխատանքը, գործերում առկա փաստաթղթերը համարակալված չեն, դրանք տեղադրված չեն համաձայն ժամանակագրության, առաջատար մասնագետ հաշվապահի /ծածկագիր 3.1-1/ անձնական գործում բացակայում է մրցույթում հաղթող ճանաչվելու մասին գյուղապետարանի մրցութային հանձնաժողովի եզրակացությունը.

8) «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում ընդգրկվում են համապատասխան համայնքի ղեկավարը, համայնքի ավագանու մինչև հինգ անդամներ և մարզպետարանի երեք ներկայացուցիչներ, իսկ նշված հանձնաժողովների կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմերը որոշում է համայնքի ավագանին:

Այս առումով՝ համայնքի ղեկավարի 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 12 որոշմամբ հաստատվել էր աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմը, սակայն համայնքի ավագանին նշված հանձնաժողովի կազմում ընդգրկելու համար չէր ընտրել իր անդամների քանակական և անհատական կազմը, այլ համայնքի ղեկավարն իր հայեցողությամբ հանձնաժողովի կազմում ներառել էր ավագանու 2 անդամի: Նշված խախտումը վերացվել է համայնքի ղեկավարի 2013 թվականի հուլիսի 3-ի թիվ 19 որոշմամբ և համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգի հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմը, ինչպես նաև համայնքի ավագանու կողմից հանձնաժողովի կազմում ընդգրկվող համայնքի ավագանու անդամների քանակական և անհատական կազմը: 20-օրյա ժամկետում հրավիրվել է հանձնաժողովի աշխատակարգային նիստ և նիստում ընտրվել է հանձնաժողովի նախագահի տեղակալ:

9) գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատվել են համայնքի ղեկավարի 2013 թվականի մարտի 5-ի թիվ 8 որոշմամբ:

10) փոփոխություններ ու լրացումներ մինչ օրս չեն կատարվել աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգում/:

11) ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգի 11-րդ կետի համաձայն աշխատակազմում պետք է վարվի մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների գրառման, վերապատրաստման, ինչպես նաև անձնական գործերի հաշվառման մատյաններ, սակայն դրանք մինչև օրս աշխատակազմում չեն վարվում:


12) համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնողների կրթության, ստաժի և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:


13) համայնքից Հայաստանի Հանրապետության մարզպետարան ներկայացված գրանցամատյանային տվյալները (Ձև N N 1, 2) համադրելիս խախտումներ չեն արձանագրվել:

14) համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթները կազմված են օրենսդրության պահանջներին համապատասխան:


15) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի պահանջներին համապատասխան համայնքում վարվում է զինապարտների հաշվառման գրանցամատյան: Զինապարտների վերաբերյալ ցուցակների, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները սահմանված ժամկետներում ներկայացվում են տարածքային զինվորական կոմիսարիատ:


16) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից համայնքում ուսումնասիրություններ չեն կատարվել:

Լիպարիտ Մարտիրոսյան 

Գագիկ Եղիազարյան 

Հուրիկ Մարտիրոսյան 

Գագիկ Հարությունյան 

Արտյոն Սարգսյան 

Արմեն Հարությունյան 

Գալուստ Ավետիսյան 